ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան 24 հուլիսի 2008թ.

1. Պայմանագրի կողմերը

Վահագն Առաքելյանը (անձնագիր՝ AA0502612, տրված 007-ի կողմից, 29/08/1996թ., հասցե՝ ք. Երևան, Հր. Աճառյան 22, բն. 30), այսուհետ՝ Երաշխավոր, և «ՏՈՆՏՈՆ» ինվեստիցիոն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (ներդրումային ընկերության գրանցման վկայական թիվ 7, ՀՎՀՀ՝ 00841696, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դեղատան փ. 2), ի դեմս տնօրեն Գոռ Առաքելյանի, որը գործում է Թողարկողի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Թողարկող, ինչպես նաև յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կհամարվի սույն պայմանագրի կողմ այն պահից, երբ սեփականության իրավունքով ձեռք կբերի Թողարկողի մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովի 24/07/2008թ. թիվ 553 արձանագրության համաձայն թողարկվող ոչ փաստաթղթային անվանական արժեկտրոնային պարտատոմսեր (այսուհետ՝ Պարտատոմսեր) և/կամ կստորագրի փաստաթուղթ, որով կհավաստվի նշված պարտատոմսերի սեփականության իրավունքով ձեռք բերելու փաստը, այսուհետ՝ Պարտատոմս ձեռք բերող:

2. Պայմանագրի առարկան

2.1 Թողարկողի կողմից Թողարկողի մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովի 24/07/2008թ. թիվ 553 արձանագրությամբ հաստատված 50,000 ՀՀ դրամ անվանական արժեքով 5,000 հատ ոչ փաստաթղթային անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման, շրջանառության, արժեկտրոնների (տոկոսագումարների) վճարման և մարման պայմաններում (այսուհետ՝ Թողարկման պայմաններ) սահմանված ժամկետներում Թողարկողի կողմից տեղաբաշխված Պարտատոմսերի մարման և/կամ դրանց նկատմամբ հաշվարկված տոկոսագումարները չվճարելու դեպքում, սույն պայմանագրով սահմանված կարգով Պարտատոմս ձեռք բերող անձից համապատասխան դիմումներ ստանալու դեպքում Երաշխավորն անվերապահորեն պարտավորվում է ամբողջությամբ վճարել Թողարկողի կողմից Պարտատոմսերի մարման և/կամ դրանց նկատմամբ հաշվարկված տոկոսագումարների գծով վճարման ենթակա ողջ գումարը:

2.2 Երաշխավորը Պարտատոմսեր ձեռք բերողի առջև պատասխանատվություն է կրում Պարտատոմսերի տեղաբաշխված ամբողջ ծավալի համար՝ ներառյալ տոկոսներ վճարելը, պարտքը բռնագանձելու կապակցությամբ դատական ծախսերը և Թողարկողի կողմից պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով առաջացած՝ Պարտատոմս ձեռք բերողի այլ վնասները հատուցելը:

3. Երաշխավորության կատարման կարգը

3.1 Թողարկողի կողմից տեղաբաշխված պարտատոմսերի մարման գումարը և/կամ դրանց նկատմամբ հաշվարկված տոկոսագումարները Թողարկման պայմաններում սահմանված օրը (ժամկետում) Թողարկողի կողմից ամբողջությամբ կամ մասնակիորեն չվճարվելու դեպքում ոչ ուշ, քան քսանօրյա ժամկետում Պարտատոմս ձեռք բերողը կարող է պատշաճ ձևով ծանուցել այդ մասին Երաշխավորին, իսկ վերջինս ծանուցումը ստանալու պահից ոչ ուշ, քան տասնօրյա ժամկետում պարտավոր է Պարտատոմս ձեռք բերողին վճարել

Թողարկողի կողմից վճարման ենթակա ամբողջ գումարը՝ Երաշխավորի պատասխանատվության ծավալի շրջանակներում:
3.2 Պարտատոմս ձեռք բերողը պարտավոր է Երաշխավորին ուղղված ծանուցմանը կցել նաև տեղաբաշխված Պարտատոմսերի գծով Թողարկողի դեմ ունեցած իր պահանջները հավաստող փաստաթղթերը:
3.3 Երաշխավորին ծանուցումը համարվում է պատշաճ ձևով ուղարկված, եթե այն Երաշխավորին ներկայացվել է գրավոր տեսքով պատվիրված նամակով (հեռագրով) առաքման միջոցով, Պարտատոմս ձեռք բերողի կողմից առձեռն հանձնելով կամ Պարտատոմս ձեռք բերողի կողմից պատշաճ կերպով լիազորված անձի կամ ցրիչի միջոցով:
3.4 Երաշխավորը պատասխանատվություն չի կրում Պարտատոմս ձեռք բերողի առջև, եթե վերջինս պահանջը չի ներկայացրել սույն Պայմանագրի 3.1 կետում նշված ժամկետի շրջանակներում կամ ծանուցմանը կցված չեն պահանջը հավաստող փաստաթղթերը կամ ծանուցումը ուղարկված չէ Երաշխավորին պատշաճ ձևով:
3.5 Մինչև Պարտատոմս ձեռք բերողի պահանջները բավարարելը Երաշխավորն այդ մասին տեղեկացնում է Թողարկողին:
3.6 Երաշխավորն իրավունք ունի Պարտատոմս ձեռք բերողի պահանջի դեմ ներկայացնել այնպիսի առարկություններ, որոնք կարող էր ներկայանցել Թողակողը, ինչպես նաև ներկայացված պահանջը բողոքարկել դատական կարգով, ընդ որում, Երաշխավորը չի կորցնում նշված իրավունքները նույնիսկ այն դեպքում, երբ Թողարկողը դրանից հրաժարվել է կամ ընդունել է իր պարտքը:
3.7 Պարտատոմս ձեռք բերողն իրավունք ունի հայցով դիմել դատարան ընդդեմ Երաշխավորի՝ սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման պահանջով:
3.8 Եթե Երաշխավորը Պարտատոմս ձեռք բերողի պահանջին դեմ չի ներկայացրել առարկություններ և/կամ դատական կարգով չի բողոքարկել ներկայացված պահանջը և սույն պայմանագրի 3.1 կետում նշված կարգով և ժամկետներում չի կատարել իր պարտավորությունը, ապա Երաշխավորը Պարտատոմս ձեռք բերողին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր կետանց օրվա համար վճարման ենթակա գումարի 0.01%-ի չափով:
3.9 Պարտավորությունը կատարած Երաշխավորին են անցնում պարտատիրոջ իրավունքներն այն ծավալով, որով Երաշխավորը բավարարել է Պարտատոմս ձեռք բերողի պահանջը:
3.10 Թողարկողը Պարտատոմս ձեռք բերողի նկատմամբ իր պարտավորությունը կատարելու դեպքում պարտավոր է այդ մասին մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել Երաշխավորին: Հակառակ դեպքում, իր հերթին պարտավորությունը կատարած Երաշխավորն իրավունք ունի Պարտատոմս ձեռք բերողից բռնագանձել անհիմն ստացածը կամ հետադարձ պահանջ ներկայացնել Թողարկողին:

4. Վեճերի լուծման կարգը

4.1 Սույն պայմանագիրը կարգավորվում է և ենթակա է մեկնաբանման ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխան:
4.2 Սույն պայմանագրի Թողարկող, Պարտատոմս ձեռք բերող և Երաշխավոր հարաբերությունների հետ կապված վեճերը ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Պայմանագրերի գործողության ժամկետը

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Թողարկողի և Երաշխավորի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պարտատոմսերի ամբողջությամբ մարման գումարի վճարման ժամկետին հաջորդող երեսուներորդ օրը:

5.2 Սույն պայմանագիրը դադարում է հետևյալ դեպքերից որևէ մեկի առկայության պայմաններում՝

5.2.1 առանց Երաշխավորի համաձայնության պարտավորությունը փոփոխելու դեպքում, որը հանգեցրել է Երաշխավորի պատասխանատվության մեծացմանը կամ նրա համար այլ անբարենպաստ հետևանքների,

5.2.2 եթե Թողարկողն իր պարտքն առանց Երաշխավորի համաձայնության փոխանցել է այլ անձի,

5.2.3 եթե Թողարկողը Պարտատոմսերի մարման գումարը և/կամ դրանց նկատմամբ հաշվարկված տոկոսագումարներն ամբողջությամբ վճարել է Պարտատոմս ձեռք բերողին,

5.2.4 միայն տվյալ Պարտատոմս ձեռք բերողի մասով, եթե հրաժարվել է ընդունել Երաշխավորի առաջարկած պատշաճ կատարումը,

5.2.5 միայն տվյալ Պարտատոմս ձեռք բերողի մասով վերջինի նկատմամբ Երաշխավորի պարտավորության դադարմամբ,

5.2.6 սույն պայմանագրի գործողության ժամկետի ավարտով:

6. Այլ պայմաններ

6.1 Թողարկողը սույն պայմանագրի պատճենը պետք է տրամադրի Պարտատոմս ձեռք բերողին, ինչպես նաև յուրաքանչյուր անձի, ով մտադիր է պարտատոմս ձեռք բերել՝ վերջինիս պահանջով:

6.2 Սույն պայմանագրի դրույթները կարող են հրապարակվել:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1 Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը պարտադիր է կողմերի իրավահաջորդների համար:

7.2 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Թողարկողին և Երաշխավորին տրվում է մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Թողարկող	*Երաշխավոր*
«ՏՈՆՏՈՆ» ՍՊԸ	Վահագն Առաքելյան
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դեղատան փ. 2	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հր. Աճառյան 22, բն. 30
Հեռ. ՝ (37410) 580 262	Հեռ. ՝ (37491) 419 223
ՀՎՀՀ՝ 00841696	Անձնագիր AA0502612,
Տնօրեն Գոռ Առաքելյան	տրված 007-ի կողմից, 29/08/1996թ.
«Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ	
h/h 1810052173183327	
Ստորագրություն _____	Ստորագրություն _____
M.S.	